

Հայոց կանխագոյն ժամանակաւ Մոլտաւիա
 Տաստատուած քլլալուն ուրիշ ցուցում մըն են
 իրենց շատ հին եկեղեցիքն ի Պոթուշան՝ յամին
 1350, եւ յեաշ՝ յամին 1395²⁶: Պոթուշանի
 եկեղեցին արձանագրութիւն մը չունի, բայց
 Եաշի եկեղեցին ունի արձանագրութիւն յամին
 ՊիՊ այն է՝ 1395: Այս արձանագրութիւնն
 է. «Շնորհօք եւ ողորմութեամբն Աստուծոյ հիմ-
 նարկեցաւ Եաշու Սուրբ Աստուածածնայ եկե-
 ղեցին ձեռամբ եկեղեցական Խաչգոյին եւ Սիս-

նորդացն, եւ այժմ է Տէր Յօնաննէս Արքեպիսկոպոս
 Ընուզաց եւ Օլախաց աշխարհի, հոգեւոր առաջնորդ
 նահանգիս եւ մեզ: Եւ գրեցաւ ի թվին Հայոց Պոտե
 Մարդի ին: Զսա յիշէ եւ Աւետիք Արքեպիսկոպոսն, ի
 վայր յամի 1446. ի կոնդակ:»

Այս Աւետիքի մասին կը գրէ Ռոշքա (1445).
 «Տէր Աւետիք երրորդ Արքեպիսկոպոսն մեր Լէօպօլսի.
 զոր Կամէսիցացիք թղթովք իւրեանց եւ Եպիսկոպոսին
 Լեհաց, նսաւ Պարոն Ստեփաննին. որ էր Դուքս Ռու-
 զաց ի տոհմէն Գօրիօվիչաց, առաքեցին յԷջմիածին առ
 Գրիգոր կաթողիկոսն առ ի հաստատել Առաջնորդ: Զոր
 կաթողիկոսն հաստատեալ եւ զՄէշովու թեմն նմա
 ստորադրեալ, պատասխանէ, զկնի ոմանց քանից, զըն-
 ւով: Եկն Տէր Աւետիք եպիսկոպոս սիրելի որդիդ մեր
 առ մեզ, եւ երեք զօեր վկայական թուղթն, եւ զՀոռով
 եպիսկոպոսին նշանն, եւ զՊարոն Ստեփաննին: Եւ մեք
 զՏէր Աւետիքդ, որ ձեզ Եպիսկոպոս էր քնական, այլ
 կրկին, եւ վերստին հաստատեցաք, եւ զՄէշով քաղաքն
 իւր զեղանովս շնորհեցաք իւրն սեպական թեմ՝ եւ վի-
 ճակ: Թվ. ՊՂԻ. Օգոստ. ԺԾ: Աստուտ յայտ է թէ
 Արքեպիսկոպոսունքն մեր Լէօպօլսի, իրաւաբար՝ մակա-
 գրին Եպիսկոպոսունք Պուղտանաց Հայոց. եւ ոչ միայն
 այս Աւետիքն, այլ եւ նախորդքն նորա Յօնաննէս եւ
 Գրիգոր այսպէս անուանէին զինքեանս: Թղ. Կամնն.
 դիւան:»

Ծ. Թ.